NATURE MORT
STILL LIFE

Նանե Ներսեսյան

«Նատյուրմորտ». Ցուցահանդեսի գաղափարի շուրջ

2019 թ. մարտի 11-ին Հայաստանի Գեղարվեստի Պետական Ակադեմիայում բացված «Նատյուրմորտ» խորագիրը կրող թեմատիկ ցուցահանդեսում ներկայացված էին գեղանկարիչ, Հայաստանի նկարիչների միության անդամ Արա Հայթայանի և ՀԳՊԱ ինը արվեստագետ ուսանողների ստեղծագործությունները: Ցուցահանդեսը Արա Հայթայանի կողմից հղացված և Արա Հովհաննիսյանի կողմից համակարգված նախագծի՝ շուրջ մեկ ամիս ընթացող համագործակցության վերջնարդյունքն էր, որը նախատեսում էր «նատյուրմորտ» գաղափարի շուրջ միավորել և կազմակերպել խմբակային ցուցահանդես ԵԳՊԱ ուսանողների անմիջական ներգրավվածությամբ: Նախագծի մասնակիցներից պահանջվում էր հարազատ մնալ Նատյուրմորտ թեմային՝ նյութերի և ձևաչափերի լայն ընտրության պայմաններում: Ցուցահանդեսին իրենց մասնակցությունն ունեցան ինչպես գեղանկարիչ և գրաֆիկ ուսանող-արվեստագետները, այնպես էլ արվեստաբան ուսանողները: Արա Հայթայանի հետ միասին, իրենց ստեղծագործություններով ցուցադրվեցին Անի Ներսեսյանը, Աննա Կրճացյանը, Թերեզա Աբգարյանը, Սիրարփի Չիբուխչյանը, Տաթև Նահապետյանը, Լիլիթ Մնացականյանը, Օֆելյա Ազիզյանը, Շուշանիկ Երանյանը, Աննա Առաքելյանը: Արվեստաբաններ՝ Մերի Ղազարյանը, Նանե Ներսեսյանը և Լուսին Շաբոյանը: Մասնակիցները խիստ տարբեր էին իրարից թե՛ մտածելակերպի, թե՛ ստեղծագործական ընկալողունակության և թեմային յուրօրինակ մոտեցման տեսանկյունից: Ցուցադրությանը ներկայացված էին գրաֆիկական, գեղանկարչական, լուսանկարչական աշխատանքներ, ինչպես նաև ներկայացված էր պոստեր որպես ինքնին ստեղծագործական հղացման արդյունք և ինստալլիացիաներ (տեղադրումներ)՝ «նատյուրմորտ-օբյեկտներ» -ի տեսքով: Ցուցահանդեսը ուղեկցվում էր «նատյուրմորտ» տերմինը տարբեր լեզուներով արտաբերող տեսաձայնային էլեմենտներով: Կարելի է նկատել, որ օգտագործված էին մարդու զգայական ընկալողունակությունների վրա հնարավորինս ազդեցություն ունեցող միջոցներ, դիտողի մոտ նատյուրմորտային մտածելակերպ ստեղծելու (այն է ՝ նատյուրմորտ տեսնել, տարբեր միջավայրային պայմաններում, առարկաների երևակայական համադրման սկզբունքով), նրան ամբողջովին նատյուրմորտային տարերքի մեջ ներգրավվելու և դրա հատկանշական մասը դարձնելու համար: Պետք է նշել, որ նախագիծը նպատակ չի ունեցել պարզապես ներկայացնել որոշակի թեմատիկ ցուցահանդես: Այն փորձ էր խախտելու սահմանները՝ հարցադրելով նատյուրմորտ հասկացությունը, այն ուսուցողական դասընթացից վերհանելով առավել բարձր և անկաշկանդ ստեղծագործագական հարթության վրա: Սա մի քայլ էր ուսանող արվեստագետներին ներգրավվելու կազմակերպչական-ստեղծագործական ամբողջական

համակարգի մեջ, որտեղ նրանք կդրսևորվեն՝ ոչ միայն որպես նկարիչներ, այլ նաև որպես կազմակերպիչներ, համադրողներ: Այն ենթադրում էր ակտիվ համագործակցություն, նոր և հետաքրքիր մտքերի, փորձի փոխանակում, անցած ուղու վերանայում: Նախագծի վերջնարդյունքը ի սկզբանե անհայտ և անկանխատեսելի էր յուրաքանչյուրի համար: Այն իր մեջ կրում էր անհատական ստեղծագործական մղումների, ձևի և բովանդակության որոնումների, փորձարարության, սահմանների ժխտման, միջոցների ընտրության կենսական գործընթացներ:

Ցուցահանդեսում Արա Հայթայանի աշխատանքները ներկայացված էին որոշակի սկզբունքով, այն էր՝ սկզբնական շրջանի, դասական մտածողության իր ընկալման և տեխնիկապես նատյուրմորտին հատուկ առավել գեղանկարչական մոտեցումից անցում դեպի թեմատիկայի բացահայտման և ներկայացման առավել ազատ և էքսպերիմենտալ դաշտ, որտեղ գեղանկարչի ստեղծագործական որոնումները ի վերջո հանգում էին նշանային կամ հետքային մտածողությանը, ձևի ազատ մոտեցմանը, վերջինիս տալով առաջնայնությունը: Աստիճանական անցումն այդպիսով մի յուրահատուկ շրջանաձև դինամիկա էր ստեղծել ամբողջ ցուցասրահում: Ուսանողների աշխատանքները ևս նույն սկզբունքով էին ցուցադրված: Շատ տարբեր էին սակայն նրանց մտքերն ու դրանց իրականացման միջոցները: Սիրարփին գեղանկարիչ է, սակայն նախընտրեց ցուցահանդեսում ներկայանալ մի շարք հետաքրքիր, ոչ գեղանկարչական մտահղացումներով, ստեղծագործական հակվածությունը դրսևորելով պոստերի, նատյուրմորտ-օբյեկտի և հնչյունային տարրերի միջոցով: Վերջինիս գործառույթը լսողական մակարդակում մարդկանց ծանոթացնելն էր «Նատյուրմորտ» տերմինի հնչողությանը՝ լեզվական տարբեր միավորներում:

Սիրարփիի ձևավորած օբյեկտները նպատակային էին: Դրանք տարատեսակ հիշողությունների, գուցե կարոտի կամ առհասարակ ժամանակի մասին խորհելու հիմք էին տալիս: «Գորգ» սյուժետային նատյուրմորտ-օբյեկտը խնդիր ուներ վերնիսաժային նատյուրմորտը «դրսից ներս բերելու» և այն ծառայեցնելու մարդկանց մեջ տարատեսակ հիշողություններ առաջացնելու, գուցե հետահայաց գնահատական տալու, գեղագիտական վերարժևորմանը՝ անցյալ դարաշրջանի, խորհրդային իրականության առօրյայի բաղկացուցիչ մաս կազմող այն կենցաղային առարկաների, որոնք 21-րդ դարում այլևս քիչ գործածելի են կամ զրկված են իրենց հիմնական ֆունկցիայից: «Հաշվիչ մեքենա և ճմրթված թղթի կտոր» նատյուրմորտ-օբյեկտը ևս իր մեջ լինելիության անցողիկության, մարդկային էությանը հատուկ՝ հետք թողնելու մեսիջն էր կրում: Թերեզան առհասարակ նատյուրմորտ ձևավորելու և այն վերարտադրելու մեջ չի տեսնում այն հետաքրքրությունը, որը սովոր է գտնել առօրյայում: Նա

նախընտրում է գտնել նատյուրմորտը բնական միջավայրում, ինչպես ինքն է նշում՝ «Բնական քաոսից լավը չկա», տվյալ ժանրում հատկապես գերադասում է ներկայացնել ժամանակի փոփոխություններին ենթարկվող անշարժ իրերի կոլորիտը: Թերեզայի նատյուրմորտային մտածելակերպը հատկապես ընդգծվում էր ցուցահանդեսին ներկայացված գրաֆիկական շարքի մեջ: Աշխատելով Հայաստանի Պատմության թանգարանում և շրջապատված լինելով հին գրքերով, կահույքով և այլ հնաշունչ առարկաներով, Թերեզան փորձել էր դիտողին փոխանցել հնամաշ միջավայրի գեղեցկությունը:

Կ. Աննայի համար նատյուրմորտը անսահմանափակ նյութի և տարածության մեջ ստեղծագործական մտքերն ու մոտեցումներն ավելի ազատ դրսևորելու միջոց էր: Դրա ապացույցն էր նրա ստեղծագործությունների մեջ հետզհետե նկատվող դասական մեթոդի և մտածողության հետաքրքիր անցումը այլընտրանքային մեթոդին թե՛ թեմաների, թե՛ դիտակետի, և թե՛ ասելիքի առումով, ընդհուպ տեխնիկապես յուղաներկը փոխարինվում է ապպլիկացիայով՝ նատյուրմորտ ձևավորելով կոլլաժային արվեստում:

Լիլիթը ևս լինելով գեղանկարիչ ցուցահանդեսին իր մասնակցությունն ունեցավ որպես լուսանկարիչ, լուսանկարները սակայն լի էին գեղանկարչական մտածողությամբ: Այդպիսով նա փորձել էր ուշադրություն հրավիրել առօրյայում մեզ հանդիպող առարկաների էսթետիկ դասավորության և թափթփվածության վրա: Ըստ Լիլիթի ցանկացած առարկայի վրա ճիշտ հայացք գցելու միջոցով, մեզ հասանելի կդառնա առօրյայում թաքնված իրական գեղեցկությունը: Այսինքն նատյուրմորտ կարող է դառնալ ցանկացած միջավայրում ցանկացած իր՝ ճիշտ ընտրված դիտակետի պարագայում:

Տաթևը հարցադրում էր գույնի և առարկայի փոխհարաբերությունները: Առարկա, որը կարող է փոխարինել գույնին, (եթե իր գեղագիտական զգաղոցությունը պահանջում է դեղին և տանը չկա կիտրոն, ապա այն կարող է փոխարինվել ձվով), ինչպես ինքը՝ Տաթևն է նշում՝ առարկայի նշանակությունը սկսեց պայքարի մեջ մտնել գույնի զգացողության հետ: Տաթևը նաև փորձ էր արել ստեղծել «նատյուրմորտ» բառին (ֆր. nature morte - մեռած բնություն) հակասող մի աշխատանք, խնդիրը փորձելով լուծել ժանրի մեջ մարդկային ֆիգուրների ներգրավվմամբ , ցանկանալով ցույց տալ, որ նատյուրմորտը կենդանի է և ապրում է:

Անին փորձարարության նկատմամբ իր սերը և բազմակողմանի մտածելակերպը բացահայտեց ներկայացնելով գրաֆիկա, գեղանկար, լուսանկար, ինչպես նաև նատյուրմորտ-օբյեկտ: Անիի ստեղծագործության մեջ գերակշռող է գիծը: Այն իր տեղը և դերը ունի ինչպես գրաֆիկական,

այնպես էլ գեղանկար ստեղծագործություններում: Սակայն առաջնահերթ տեղ տալով գծին, Անին չի անտեսում գույնը, այս դեպքում նկարիչը պարզապես ավելի դիպուկ և մտածված է ընտրում այն: Գիծ-ֆորմա, գույն-տարածություն սկզբունքն է ընկած նրա ստեղծագործության հիմքում: Պատկերները հնարավորինս պարզեցված էին, այդպիսով Անին փորձում էր գծին ենթարկել ֆորման և տարածությունը, վերջինս բացահայտելով (բացելով) մի կետից որտեղ կենտրոնանում է իր հայացքը:

Ցուցահանդեսին հաջորդած քննարկման ժամանակ իրենց բանախոսություններով ելույթ ունեցան Արա Հայթայանը, Մերի Ղազարյանը, Նանե Ներսեսյանը, մասնակիցները ևս հնարավորություն ունեցան ներկայացնելու իրենց ստեղծագործությունները, այդպիսով ամբողջական պատկերացում ստեղծելով թե՛ ցուցահանդեսի և թե՛ նատյուրմորտ ժանրի մասին առհասարակ:

Ամփոփելով «Նատյուրմորտ» ծրագրային ցուցահանդեսը կարող ենք նկատել, որ այն հավատարիմ էր իր կոնցեպտին՝ փորձարարությանը: Դրա շնորհիվ նախագծի մասնակիցներն իրենց մեջ բացահայտեցին նոր հայացք, նոր նպատակ, ձևի ազատ մոտեցում, հարցադրելով արվեստը և այդ անսահմանափակ համակարգում իրենց գործառույթը: «Նատյուրմորտ»-ը հանդիսացավ գործիք արվեստի շուրջ ևս մեկ անգամ խոսելու համար:

Աննա ԿՐՃԱՑՅԱՆ

Անի Ներսիսյան





Արա Հայթայան



Օֆելյա Ազիզյան

Շուշանիկ Երանյան

Սիրարփի Զիբուխչյան



«Նատրյուրմորտ», Առարկա, ձև, ուտոպիա
Մարինե Խաչատրյան

Մարտի 11-ին Գեղարվեստի ակադեմիայում տեղի ունեցավ «Նատյուրմորտ» կոչվող ցուցահանդեսը՝ նկարիչ Արա Հայթայանի և ակադեմիայի մի խումբ ուսանողների մասնակցությամբ և համադրմամբ: Ցուցահանդեսը կոչված էր ուսումնասիրելու ժանրի սահմաններն ու դրա ժամանակակից դրսևորումները: Բացմանը հաջորդեց ժանրի պատմական զարգացման վերաբերյալ քննարկում-բանախոսություն, որը համալիր պատկերացում տվեց նատյուրմորտի մասին ու դրա շուրջ մտորումների նոր առիթ ստեղծեց:

Նատյուրմորտը մեռած առարկաների աշխարհ է (բառացի նույնպես նշանակում է «մեռած բնություն»՝ nature morte): Նատյուրմորտներ ուսումնասիրող Իրինա Դանիլովան գրում է՝ «ամեն կենդանի բան նատյուրմորտում մեռնում է և վերածվում առարկայի: Ծաղիկները պետք է պոկված լինեն իրենց բնական միջավայրից, մրգերն ու պտուղները՝ քաղված, կենդանիներն ու թռչունները՝ սպանված, ձկներն ու ծովային կենդանիները՝ ջրից հանված, որպեսզի հայտնվեն նատյուրմորտում»:1 Այս ցուցահանդեսում ևս նարինջը կտրված է, տանձը՝ կծած, ծաղիկները՝ թառամած, ձուկը՝ եփված, ձուն՝ ձվածեղ դարձած, մարդը՝ քանդակված կամ հայելու մեջ որպես արտացոլանք ֆիքսված, բայց ոչ երբեք որպես գործող սուբյեկտ պատկերված: Ինչպես դասական նատյուրմորտների մեջ, այստեղ ևս կենդանի արարածներ գրեթե չկան:

Ցուցահանդեսում պահպանվել են իրերը, փոխվել է դրանց բնույթը: Ժանրի կանոնների խախտումը և սահմանների հարցադրումը երևում է առարկաների մեկնաբանման կերպի մեջ: Ցուցադրությունը կենդանացնում է առարկաների աշխարհը, աշխատեցնում իրերը, քանի որ ռոբոտաշինության, տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում իրերի անկենդանությունը անհնար է:

Ներկայումս առարկաներին վերապահված են ֆունկցիաներ, որոնք իրականացնելու ընթացքում դրանք դադարում են անկենդան լինել. որոշները ձայն են հանում, մյուսները՝ պատկեր ցուցադրում, հաջորդներն էլ՝ փոխարինում մարդու այս կամ այն գործառույթը: Խորհրդային իրերից կազմված ինստալացիայում իրերից մեկն իր ֆունկցիան կատարելիս է ներկայացված. վաղուց հնացած հեռուստացույցը հազիվ ցուցադրում է հեռուսատատեսային հաղորդում: Իսկ մնացած առարկաները, թեև իրենց աշխատանքի պահին չեն ցուցադրված,

սակայն, պարզ է՝ դրանք ևս ունակ են կատարելու որոշակի գործողություններ. սովետական ֆոտոխցիկը սև-սպիտակ լուսանկարներ է անում, ռադիոընդունիչը հեռարձակում է ռադիոալիքներ, մանկական խաղասարքը թույլ է տալիս խաղալ: Սիրարփի Չիբուխչյանի ինստալացիայում հին գրամեքենան ձայն հանելով տպագրում է, Լիլիթ Մնացականյանի նատյուրմորտ կոլաժում ակորդեոնը նվագում է, Անի Ներսիսյանի ինստալացիայում էլ՝ աստիճաններից կախված կաթսաները թեթևակի շարժման մեջ են և ամենափոքր հարվածի դեպքում պատրաստ են բարձր ձայն հանել: Ցուցասրահի պատերից մեկից կախված լարերը արվեստի տարածքից դուրս սպասարկում էին այս կամ այն տեխնոլոգիական սարքը՝ աշխատանքի մեջ դնելով այն: Թվում է՝ նատյուրմորտը չպետք է խոսի, թեկուզ հեռուստացույցից կամ ռադիոընդունիչից, չպետք է նվագի, տպի, ձայն հանի կամ պատկեր անի: Ցուցահանդեսը նատյուրմորտի հետ կատարված, ժամանակով թելադրված այս մետամորֆոզի արդյունքներն է վերհանում:

Դիտմամբ թե ոչ՝ նատյուրմորտում առարկաները շունչ են ստանում՝ հարցադրելով դրանում առարկաների՝ մեռած լինելու անհրաժեշտությունը և հարուցելով հետևյալ հարցը. «կարո՞ղ է հետարդյունաբերական դարաշրջանում, շարժվող մեքենաների բազմության, ռոբոտային գործերի առատության, տեխնիկայի բազմաֆունկցիոնալության պայմաններում նատյուրմորտը մնալ բացառապես անշարժ իրերի հավաքածու, թե՞ հեռուստացույցից ճառագող պատկերն ու հնչող ձայնը նատյուրմորտի՝ մեռած իրերով գոյության ավարտն է ազդարարում կամ դրա կերպարանափոխության սկիզբը»:

Պատկերված առարկան քիչ հնարավորություններ ունի «կենդանի լինելու», պատկերումն ի վիճակի է անգամ ամենաշարժուն առարկային «հանգուցյալ» դարձնելու, քանի որ այն ֆիքսում է պահը հարթության վրա: Նույնիսկ շարժման պատկերումը շարժում չէ, այլ դրա պատրանք: Ձայնն, առավել ևս, պարզապես հավերժական իղձ է գեղանկարչության համար: Հաղթահարելով գեղանկարչության այս սահմանափակումը ինստալացիաների միջոցով ու թվացյալ կերպով մնալով նատյուրմորտի նեղ շրջանակների մեջ՝ ցուցահանդեսն, այնուամենայնիվ, խարխլում է ժանրի հիմքերը: Ոչ միայն պատկերելով դրա գլխավոր «մոդելներին»՝ առարկաները, կտավների վրա, այլ որպես քանդակ կամ ինստալացիա՝ իրական առարկաների տեսքովներկայացնելով ցուցասրահում՝ նատյուրմորտը՝գեղանկարչության մեջ ծնված ու սնված այս ժանրը, այլ տիրույթներում վտանգում է իրեն ներհատուկ անկենդանությունը:



Առարկաների «կենդանությունն», այնուամենայնիվ, չի խախտում ժանրի՝ անցողիկության գաղափարի փոխանցման սկզբնական նպատակը: Օֆելյա Ազիզյանի աշխատանքներից մեկում մեջբերված է Վան Գոգի խոսքն այն մասին, որ ինքն առավոտից աշխատում է, քանի որ ծաղիկներն արագ են թառամում, ուստի անընդհատ շտապում է նկարել, որ հասցնի: Դասական նատյուրմորտներում անցողիկության գաղափարը մարմնավորող թոշնած ծաղիկներին ներկա նատյուրմորտներում փոխարինելու են եկել խորհրդային և վաղ հետխորհրդային շրջանների իրերը: Էլեկտրոնային խաղերի հին սարքը, հեռուստացույցը, գրամեքենան, «Զենիթ» ֆոտոապարատը և ֆոտոժապավենը կարոտով հիշեցնում են անցած տասնամյակների ու իրերի՝ վաղեմության ժամկետի արագ սպառման, հետևապես՝ կյանքի վաղանցիկության մասին: Սպառողական դարաշրջանում իրերի կյանքի կրճատված տևողությունն ավելի է սրում այդ գաղափարը ու ակտուալացնում ժանրը:

«Ինձ թվում է՝ մեր շարժման ամենակարևոր ձեռքբերումներից մեկն այն է, որ մենք գեղանկարչությունն ազատագրեցինք առարկայի գերիշխանությունից: Ես ազատ եմ նկարել ծաղիկներ և անվանել այն ծաղիկներ՝ առանց դրա շուրջ պատմություններ հորինելու», աշխատանքներից մեկում մեջբերված է Օգյուստ Ռենուարի մտքերից: Ճիշտ է՝ ներկայիս նատյուրմորտը ազատ է պատմություն պատմելու կապանքներից: Սակայն հարցն այն է, որ նատյուրմորտում գեղանկարչությունը ոչ թե ազատագրվում է առարկայից, այլ հակառակը՝ դառնում է իրի ընձեռնած հնարավորությունների հլու հնազանդ ծառան:

Առարկան այնքան կենտրոնական դեր է ստացել ցուցահանդեսում, որ երկրորդվել են պատկերների ոճն ու մեդիան: Կուբիզմից մինչև ֆովիզմ, ռեալիզմից մինչև անգամ աբստրակցիա տիրույթում գտնվող տարբեր ոճերի այս գեղանկարները, գծանկարները, լուսանկարները, քանդակներն ու ինստալացիաները միավորում են իրերը: Ժանրը ողջունում է ոճերի բազմազանությամբ հարստանալու հեռանկարը, բայց պատկերվող օբյեկտի հանդեպ ունի միանշանակ խտրական վերաբերմունք. նատյուրմորտը հավատարիմ է միայն առարկային: Ժանրի այս անխախտ կողմնորոշումն առ առարկա և անհետևողականությունն ու ներառականությունը ոճերի և մեդիաների հանդեպ արտացոլված է ցուցահանդեսում, որտեղ նատյուրմորտի միակ տարբերանշանը շարունակում է մնալ առարկան:

Առհասարակ նատյուրմորտի ժանրը բացասում է առաջին հերթին մարդու պատկերումը: Թեև մարդ արարածը բացակայում է այս նատյուրմորտներից ևս (բացառությամբ մի նկարի)՝ սակայն նա ներկա է «տողատակում», «կադրից դուրս», ամենուրեք կա մարդկային հետքը:

Ուտելիքով լիքը սեղանները որևէ մեկի համար են բացված կամ ինչ-որ մեկն արդեն օգտվել է դրանցից և հեռացել, երաժշտական գործիքներ որևէ մեկը, հավանաբար, նվագում է, հանված կոշիկները, բացված ծխախոտի տուփն ու աթոռը որևէ մեկին են պատկանում: Գրեթե բոլոր առարկաները ակնարկում են մարդուն՝ իրենց ծառայության մասին, որով իրերը դիտարկվում են որպես մարդկային սպառողական կարիքների բավարարման օբյեկտներ:

«Ես դրեցի Մանեի «Տանձերով նատյուրմորտը» Էնգրի «Յուպիտերը և Թետիսը» նկարի կողքին: Տանձերը դուրս շպրտեցին բոլոր աստվածներին»: Էդգար Դեգայի այս խոսքերը փաստում են, որ ցուցահանդեսը շարունակում է արդի և ժամանակակից արվեստի բռնած ծիրը՝ կասեցնելով «մեծ» թեմաների հաղթարշավը «երկրորդական» թեմաներով՝առարկաների խմբավորում-կույտով:

Թեմայից ու պատկերվող օբյեկտից հետո հորինվածքի կառուցումը հաջորդ կենտրոնական հարցն է այս աշխատանքներում: «Ես հսկայական ջանքեր եմ ներդնում հանուն կոմպոզիցիայի կառուցման, որպեսզի այն թվա կարծես թե պատահական առարկաների բնական դասավորություն... Նկարել նկար, որ զուրկ լինի արտիստիզմից», լուսանկարներից մեկում մեջբերված է Անրի Ֆանտեն Լատուրի խոսքերից: Իսկապես, ցուցահանդեսի գործերի մի մասում առարկաները «բնական» միջավայրում են՝ անփույթ, զուրկ դասավորության ջանադիր «կոկետությունից», մյուսում՝ զինվորական կարգապահ շարասյան նման՝ իրերը խմբված են հենց իրենց համար նախատեսված տեղում՝ «ձիգ», բռնազբոսիկ, կազմ ու պատրաստ նկարվելու և դիտվելու:
Ցուցահանդեսի խայտաբղետությունը, սակայն, երևում է ոչ այնքան հորինվածքային լուծումների բազմազանության ու առարկաների լայն տեսականու, որքան ոճական առատության մեջ: Ծավալները մեկ կոտրված են երկրաչափական մարմինների մեջ, մեկ՝ վերացական ֆորմաների մեջ տարրալուծված, մեկ ընդհանրացված են, պարզեցված, երբեմն՝ աղճատված, մեկ՝ գերիրական՝ շոշափելիության պատրանք ստեղծող: Վերածնունդի ծնունդ համարվող այս ժանրը արդի ու ժամանակակից արվեստի ուղղությունների պրիզմայով անցկացրած ոճական առանձնահատկություններով ներխուժում է ժամանակակից աշխարհ այնպես, ասես ներկայացնում է նատյուրմորտի պատմական ճամփորդությունը ժամանակով՝ այն բերել հասցնելով մեր օրերը ու փորձարկելով դրա ներկայիս ներուժը:

Տաթև Նահապետյան

Լիլիթ Մնացականյան

Թերեզա Աբգարյան



02.02.13

Աննա Առաքելյան